

բարեց բարկութեան մէջ, թէ «այն մարդն անիծեալ լինի, որ այսօր զնայ յայն եկեղեցին» :

Պատարազը տեղի ունեցաւ : Աւարտելէն ետքը փակեց եպիսկոպոսը եկեղեցւոյն դուռն եւ գնաց : Այսպէս փակուած մնացին Կամենիցի երկու եկեղեցիները Յայտնութեան աւագ տօներու օրերուն (4 Յունիւ. 1629, Կիր. ըստ Նոր տոմարի = 25 Դեկտ. 1628, Եւ. ըստ Հին տոմարի) :

Երկու զոռոզ դէմքեր բախած էին իրարու : Կեսարացին ի բնէ ահեղ, կամապաշտ եւ խստապահանջ, յեցած իւր հռչակուած ճոխութեան վրայ, կը սաստէր, կը յանդիմանէր վարդապետական բոլոր իշխանութեամբ, առանց անդրադառնալու թէ կը գտնուի լեհական հողի վրայ եւ ոչ ի Թուրքիա : Իր դէմ ունէր եպիսկոպոս մը թագաւորական հաստատագրով, տաքգլուխ երիտասարդ մը, յանդուգն, նոյնպէս կամապաշտ, ոչ մէկ միջոցի առջեւ պատկառող :

Կեսարացւոյն յոխորտանքը թուլացնելու համար գնաց Նիկոլ նոյն օրը Կամենիցի Վոյթին՝ Լուկաչին եւ չարախօսեց վարդապետի մասին, ամբաստանելով զինքը իրրեւ լրտես :

Ասաց. Չաշուտ՝ թուրքէն եկած,  
Խռովեցուցիչ եւ մեծ հերձուած :

Պահանջեց Վոյթէն, որ թոյլ չտայ վարդապետին շրջիլ Լվով կամ ուրիշ քաղաքներ. այլ հեռացնէ Լեհական սահմաններէն : Ժամանակ